



Լրատու Newsletter

ԳԵՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Ապրիլ 2015
Լրատու թիւ 4

Ողջոյնի Խօսք

ԱՆԻ

Աւարտուեց 2014-2015 ուսումնական տարուայ 2-րդ եռամսեակը: Երկրորդ եռամսեակի ընթացքում, կրթական դասընթացներին զուգահեռ վարժարանում կազմակերպուել են բազմաթիւ հանդիպումներ, հանդէսներ ու ձեռնարկներ: Արժանի են նշել Երևանի Պետական համալսարանի դասախօս, պատմական գիտութիւնների դոկտոր Արտակ Մովսիսեանի այցելութիւնը, Ընդհանուր Գիտելիքների Մրցոյթ, Սուրբ Վարդանանց տոնը, Մայրերի տոնը, Սուրբ Զատիկ և Ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

E-mail: armenianschool@hotmail.co.uk

Օգտուելով առիթից շնորհաւորում են բոլորիդ Սուրբ Զատիկի առթիւ: Մաղթում են բոլորիդ քաջառողջութիւն, յաջողութիւններ և երջանկութիւն:

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի

ՎԱՆ

Քրիստոս Յարեալ ի

մեռելոց

Օրհնեալ է Յարութիւնը

ԿԱՐՍ

Լրատու-4-ը ներկայացնում է Վարժարանում կատարուած այդ աշխատանքները:

Քրիստոսի

Շնորհակալութիւն Լրատու-4-ը կազմող յանձնախմբին՝ Տիկնայք Ստելլա Թարվերդուն, Անուշ Գեղամեանին և Լենա Գիւլիսանճեանին:

Եթէ կունենաք որևէ հարց կամ առաջարկ այս շրջաբերականի բովանդակութեան վերաբերեալ, առանց վարանելու ուղարկեք էլեկտրոնային նամակ՝





Ամանորի արձակուրդից վերադարձ վարժարան

Ծոյլ և խաղով լի օրերն աւարտին հասան և մեծ ու փոքր, ծոյլ և աշխատասէր, աշակերտ կամ ուսուցիչ, բոլորս Յունուարի 11-ին վերադարձանք դպրոց և ներս մտնելուն պէս անդրադարձանք, որ կարօտել ենք մեր սիրելի դպրոցը: Տնօրինուհու բարի գալուստի խօսքով սկսուեց մեր երկրորդ եռամսեակը:

Ապա Տէր Շնորհք Քահանայ Բաղդասարեանը պարզ և հասկանալի կերպով աշակերտ-ուսուցիչներին բացատրեց, թէ Սուրբ Յիսուս Քրիստոսի ծննդեան տօնակատարութիւնն ի՞նչ նշանակութիւն ունի մեր կեանքում և մենք որպէս հայ ի՞նչ բարոյական արժէքների պէտք է ձգտենք:

Իր երկրորդ այցելութեան ժամանակ՝ փետրուարի 8-ին Տէր Շնորհքը բացատրեց որոշ կետեր աղօթքի մասին:

Ապա սկսուեցին դասերը և բոլորը զբաղուեցին իրենց աշխատանքներով և մտահոգութիւններով:

Այս եռամսեակին ուսուցիչները մտածում են երեխաների առաջին կիսամեակի վկայագրերը պատրաստելու ուղղութեամբ և պարտականութիւն են համարում լինել արդարադատ, հոգատար և քաջալերող:



Երևանի Պետական համալսարանի դասախօս, պատմական գիտութիւնների դոկտոր Արտակ Մովսիսեանի այցելութիւնը



Գ. Թահթեան վարժարանն հաւատարիմ մնալով իր առաքելութեանը, պարտք համարեց մաս կազմել համայնքիս՝ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած ձեռնարկներին:

Այս միտումով վարժարանս Բրիտանահայ Համայնքային Խորհրդի Մշակութային յանձնախմբի հետ համատեղ, Հայաստանից Լոնդոն հրաւիրեց Երևանի Պետական համալսարանի դասախօս, պատմական գիտութիւնների դոկտոր Արտակ Մովսիսեանին:



Դոկտոր Արտակ Մովսիսեանի այցելությունը ...



Յունուարի 31-ին Նաուսարդեան կենտրոնում տեղի ունեցավ ձեռնարկը, որը բաղկացած 2 մասից:

Դոկտոր Մովսիսեանն առաջին մասում դասախոսեց երկու նիւթերի մասին՝ Հայոց 5000 ամեայ պետականությունը և նախամաշտոցեան գրերը: Երկրորդ մասում ցուցադրուեց «Հռոմից աւելի հին մայրաքաղաքը» փաստագրական ֆիլմը: Ներկաները առիթ ունեցան նաև գնելու պատմաբանի յեղինակած գրքերից՝ աւելի ընդլայնելու իրենց տեղեկությունները:

Փետրուար մեկին դոկտոր Մովսիսեանն այցելեց վարժարան: Նա աշակերտներին ներկայացրեց իր յեղինակած գրքերից «Հայոց 10 ականաւոր թագուհիներ» գիրքը: Համայնքային Խորհրդի և վարժարանի անդամների ջանքերի շնորհիւ դոկտոր Մովսիսեանը կարճ ժամանակամիջոցում առիթն ունեցավ այցելել Լոնդոնի պատմական արժէք ներկայացնող վայրերից մի քանիսը, եղաւ նաև Stonehenge-ում:



Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը ինդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:





Հնդհանուր Գիտելիքների Մրցույթ

Փետրուարի 7-ին, Նաւասարդեան սրահում, տեղի ունեցաւ համայնքի կողմից շատ սիրուած այս ձեռնարկը: Մրցույթի հարցերը պատրաստել և այն վարում էր պրն Հրաչ Թոքատեանը: Այս տարի մասնակիցների թիւը նախորդ տարիներից անհամեմատ աւելին էին: Երեկոյին մասնակցեցին 12-ից մինչև 85 տարեկանները, նրանք փորձեցին իրենց գիտելիքի և յիշողութեան մակարդակը, վայելեցին ծնողական յանձնախմբի պատրաստած համեղ կերակուրները: Վերջապէս յաղթող կամ ոչ յաղթող, շատ բարձր տրամադրութեամբ գնացին տուն յիշելով, որ վաղը շատերի համար դպրոցական օր է:



Սուրբ Վարդանանց Տոնը



Ինչպէս ամեն տարի, այս տարի նույնպէս, փետրվարի 15- ին նշվեց Սուրբ Վարդանանց տոնը: Որի նպատակն է եկող սերունդների մեջ դաստիարակել հայրենասիրություն, ազնվություն, հպարտություն իրենց հայրենիքի նկատմամբ, և նաև ծանոթացնել մեր հարուստ պատմությունն անցյալին: Օրվա խորհուրդը փոխանցեց Թամար Մինասյանը, որին հաջորդեց երգչախումբը իր գեղեցիկ և խրոխտ երգերով, գովաբանելով քաջ Վարդանին:

8-րդ դասարանի աշակերտները (ուսուցչուհի տիկ. Թ. Մինասեան) ներկայացրեցին փոքրիկ պատկեր - կովին նախապատրաստվող նախարարները, ինչպէս նաև կանանց կամավորականների խումբը, սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ:



Մայրերի Տոնը



Մարտի 15- ին նշվեց Մայրերի տոնը: Տոն, որով կարևորվում է հայ մոր նվիրվածությունը, անձնագոհությունը, առաքինությունը և համեստությունը:

Երեխաներն իրենց գեղեցիկ արտասանություններով արտահայտեցին իրենց սերը, ուրախությանը և ուշադրությունը իրենց գեղեցիկ մայրիկների նկատմամբ: Հանդեսի վերջում տիկ Ժենյա Ներսիսյանն արտասանեց բանաստեղծություններ նվիրված մայրերին:



Սուրբ Ջատիկ



Մարտի 15- ին նշվեց Մայրերի տոնը: Տոն, որով կարևորվում է հայ մոր նվիրվածությունը, անձնագոհությունը, առաքինությունը և համեստությունը:

Երեխաներն իրենց գեղեցիկ արտասանություններով արտահայտեցին իրենց սերը, ուրախությանը և ուշադրությունը իրենց գեղեցիկ մայրիկների նկատմամբ: Հանդեսի վերջում տիկ Ժենյա Ներսիսյանն արտասանեց բանաստեղծություններ նվիրված մայրերին:





Վերապատրաստման դասընթացներ



Առաջին անգամը լինելով, Մարտի 20- ին և 22-ին, Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվեց հայերեն լեզվի վերապատրաստման դասընթացներ, որն անցկացրեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս Աստղիկ Բալայանը: Դասընթացների ընթացքում ներկայացվեց ժամանակակից մեթոդներով անցկացվող դասավանդումները:

Դասընթացները նպատակաուղղված էին ժամանակակից մոտեցումներով գրաճանաչության արդյունավետ կազմա-կերպմանը, սովորողների կարդալու կարողության և բանավոր ու գրավոր խոսքի զարգացմանը: Հատկանշական է, որ տիկին Բալայանը ընտրել էր ավելի հեշտացված ծրագրեր ոչ ամենօրյա դպրոցներում դասավանդման համար:

Ուսուցիչները շատ կարևորեցին այդ դասընթացները, վստահեցնելով, որ այն կկիրառվի և իր արդյունքը կտա:



2014-2015 Տարեշրջան



Առաջին եռամսեակ 07 Սեպտ. 2014 – 14 Դեկտ. 2014	
7 Սեպտեմբեր	Վերամուտ
19 Հոկտեմբեր	Մշակույթի Օր
26 Հոկտեմբեր	Արձակուրդ
23 Նոյեմբեր	Ծնողական Ընդհանուր Ժողով
14 Դեկտեմբեր	Նոր Տարուայ Հանդես
Երկրորդ եռամսեակ 11 Յունուար 2015 – 22 Մարտ 2015	
7 Փետրուար	Ընդհանուր Գիտելիքների Մրցում
15 Փետրուար	Վարդանանց Տոն
22 Փետրուար	Արձակուրդ
15 Մարտ	Մայրերու Օր
22 Մարտ	Զատնուայ Հանդես
Երրորդ եռամսեակ 12 Ապրիլ 2015 – 5 Յուլիս 2015	
25 Ապրիլ	Ցեղասպանության 100 Ամեակ
17 Մայիս	Մարզական Օր
24 Մայիս	Արձակուրդ
21 Յունիս	Դաշտահանդես
05 Յուլիս	Ամավերջի Հանդես

Our News in Brief

- On 1st February, Dr Artak Movsisyan, a Professor at Yerevan State University and author of several history books, visited the school and gave a fascinating presentation about “10 Outstanding Queens of Armenia”. Dr Movsisyan was invited to London in association with the Cultural Committee of the Armenian Community Council of UK in a series of commemorative events for the Centennial of the Armenian Genocide.
- On February 7th, the highly anticipated event of Quiz Night took place at Navasartian Centre. This event was well attended and everyone enjoyed the food prepared by the Parents’ Association and as usual the interesting questions were prepared and the event was run by Mr Hratch Tokatlian.
- On February 15th, pupils observed Vartanantz; one of the most significant events in Armenian history. They sang and recited poems to glorify our national hero and the year 8 pupils presented a scene from the Battle of Avarayr.
- On March 15th, the pupils celebrated Mother’s Day in songs and poems. Mrs Jenia Nersisian also recited a very touching poem by Paruyr Sevak.
- On March 22nd the Parents’ Association prepared an Easter bazaar and some tasty food for everybody to enjoy.
- On March 20th and 22nd the teachers had two training sessions on modern methods of teaching provided by Armenian State Pedagogical University lecturer, Mrs Asdghig Balayan.

Խմբագիրներ՝ Տիկ Ստելլա Թարվերդի, Տիկ Անուշ Գեղամեան,
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Էջադրում՝ Տիկ Լենա Գիլիսանճեան